

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի Հանրապետության կառավարության՝

### «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին

Ուսումնասիրության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի տարեկան ծրագիրը,  
«Վերահսկիչ պալատի մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները:

Ուսումնասիրության նպատակը՝ «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման  
վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)  
համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուսումնասիրության օբյեկտները՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, գանձապետական  
համակարգ:

Ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 01.05.2011թ. մինչև 20.05.2011թ.:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝ «ՀՀ 2010 թվականի  
պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվություն, «ՀՀ 2010  
թվականի պետական բյուջեի մասին» (այսուհետ՝ Օրենք), «ՀՀ բյուջետային համակարգի  
մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներ, 2009 թվականի դեկտեմբերի  
24-ի «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և ՀՀ  
2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» ՀՀ կառավարության  
թիվ 1522-Ն որոշում, ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի  
Հանրապետության պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու  
մասին» թիվ 48 որոշում, բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ,  
ինչպես նաև այլ իրավական ակտեր:

### 2010 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ  
կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2010 թվականի պետական  
բյուջեի եկամուտները «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝  
Օրենք) նախատեսվել է 742,138,045.8 հազ. դրամ: 2010 թվականի ընթացքում պետական  
բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 30,823,549.7 հազ.

դրամով, և արդյունքում՝ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 772,961,595.5 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 11 կետի, արտաբյուջետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվել են ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվել են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: Հաշվետվությունում ՀՀ 2010 թվականի պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներում մուտքերը ճշտված ծրագրով կազմել է 25,188,356.2 հազ. դրամ, որից՝ 19,943,141.2 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացվող եկամուտներն են, 5,257,227.3 հազ. դրամը՝ արտաբյուջետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը, 12,012.3 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են: Արտաբյուջետային միջոցների հաշիվներում փաստացի մուտքը կազմել է 24,600,449.5 հազ. դրամի գումար, որից՝ 19,288,854.1 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 5,290,048.5 հազ. դրամը՝ արտաբյուջետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը, իսկ 21,546.8 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի եկամուտներն, առանց արտաբյուջետային միջոցների, փաստացի կազմել է 761,150,572.9 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային միջոցների) նկատմամբ՝ 101.1%, իսկ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի եկամուտները, ներառյալ՝ արտաբյուջետային միջոցները, փաստացի կազմել է 780,439,427.1 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 105.2%-ը, ճշտված ծրագրի՝ 101.0%-ը: 2010 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի (3,461,883,200.0 հազ. դրամ) նկատմամբ կազմել են 22.5% (2009թ.՝ 22.2%):

Օրենքով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 935,524,584.0 հազ. դրամ, 2010 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 40,772,320.1 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 24,121,918.8 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշիվն կատարվող ծախսը) կազմել է 976,296,904.1 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված ծրագիրը (առանց արտաբյուջետային միջոցների հաշիվն կատարվող ծախսի) կազմել է 952,174,985.4 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 18,785,251.7 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 954,316,528.3 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 102.0%-ը, ճշտված ծրագրի՝ 97.8%-ը: 2010 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 27.6% (2009թ.՝ 29.9%):

Օրենքով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի պակասորդը հաստատվել է 193,386,538.2 հազ. դրամ: ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախատեսված պակասորդը

տարվա ընթացքում ավելացել է 9,948,770.4 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 203,335,308.6 հազար դրամ: ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 173,877,101.3 հազ. դրամի պակասուրդ, որը Օրենքով նախատեսվածի 89.9%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ նախատեսվածի 85.5%-ը: ՀՆԱ-ի նկատմամբ 2010 թվականի պակասուրդը կազմում է 5.0% (2009թ.՝ 7.7%):

2002-2010 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ օրենքներում կատարված վերլուծությամբ առկա է ՀՀ կառավարությանը փոխանցված լիազորությունների ընդլայնում, որով 2010 թվականին ՀՀ կառավարությունը լիազորվել է լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

### **2010 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ**

2010 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 780,439,427.1 հազ. դրամ (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները), 2010 թվականին բյուջեի փաստացի եկամուտները 2009 թվականի համեմատ աճել են 90,444,325.6 հազ. դրամով կամ 13.1%-ով, իսկ առանց արտաբյուջետային եկամուտների, աճը կկազմի 87,947,545.6 հազ. դրամ կամ 13.1%: 2010 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները, կազմել է 22.5%, 2009 թվականի 22.2%-ի փոխարեն, այսինքն՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 0.3% տոկոսային կետով:

Ըստ Հաշվետվության, 2010 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում, հարկային եկամուտները կազմել են 73.6%, առանց արտաբյուջետային հաշիվների եկամուտների՝ 75.2%, պետական տուրքերը՝ համապատասխանաբար՝ 2.6% և 2.6%, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ համապատասխանաբար՝ 13.5% և 13.8%, պաշտոնական տրանսֆերտները՝ համապատասխանաբար՝ 3.9% և 3.7% և այլ եկամուտները՝ համապատասխանաբար՝ 6.5% և 4.6%:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) Օրենքով նախատեսված 550,062,405.0 հազ. դրամից ավելի է մուտքագրվել 24,002,028.4 հազ. դրամով, կամ 4.4%-ով, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 574,064,433.4 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված տարեկան ծրագրի 102.5% կատարում: 2010 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 16.6%, նախորդ տարվա 16.2%-ի համեմատ:

2010 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 20,034,563.2 հազ. դրամի պետական տուրք, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 98.5%, իսկ Օրենքով հաստատվածի նկատմամբ՝ 100.5%: 2010 թվականին պետական տուրքը կազմել է փաստացի եկամուտների 2.6%-ը:

2010 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները Օրենքով նախատեսվել են 105,234,500.0 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 101,419.3 հազ. դրամով ավելի և կազմել է 105,335,919.3 հազ. դրամ, կամ կատարվել է 100.1%-ով: 2010 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են փաստացի եկամուտների 13.5%-ը:

2010 թվականին պետական բյուջեի պաշտոնական տրանսֆերտները Օրենքով նախատեսվել են 42,503,285.8 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 47,582,256.4 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 30,588,819.5 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի՝ 72.0%-ը, ճշտված ծրագրի՝ 64.3%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական տրանսֆերտները կազմել են 28,242,509.3 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 66.5%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 63.6%: 2010 թվականին պաշտոնական տրանսֆերտները կազմել են փաստացի եկամուտների 3.9%-ը:

2010 թվականին պետական բյուջեի «այլ եկամուտները» Օրենքով նախատեսվել են 24,400,260.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 39,592,257.4 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 50,415,691.7 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի՝ 206.6%-ը, ճշտված ծրագրի՝ 127.3%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 35,047,548.6 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 143.6%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 142.0%: 2010 թվականին «այլ եկամուտները» կազմել է փաստացի եկամուտների 6.5%-ը:

Հաշվետվությունում բացակայում է ըստ եկամտատեսակների ճշտված պլանին և կատարողականին վերաբերող տվյալները, որը հնարավորություն չի ընձեռում հիմնավոր վերլուծություն իրականացնել: Վերահսկիչ պալատի կարծիքով, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախատեսել եկամուտները՝ ըստ եկամտատեսակների, մասնավորապես՝ հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների:

2010 թվականի ընթացքում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունները ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահաբաժին են վճարել 658,717.2 հազ. դրամի, նախատեսված 330,000.0 հազ. դրամի փոխարեն:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ներկայումս ՀՀ պետական ռեզիստրում գրանցված է պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող թվով 772 ընկերություն, որից՝ 715-ը՝ 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերություններն են, իսկ 57-ը՝ մինչև 50 տոկոս: Պետք է նշել, որ ներկայումս 772-ից վերահսկողության դաշտում է գտնվում 387 ընկերություն, որից՝ 382 ընկերությունները պետության սեփականություն հանդիսացող 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցողներն են, իսկ 5-ը՝ մինչև 50

տոկոս պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններ: Այսինքն՝ ՀՀ ֆինանսների նախարարության վերահսկողության դաշտից դուրս են մնում ընդամենը թվով 385 ընկերություններ (52-ը մինչև 50 տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերություններ և 333-ը՝ 50 և ավելի տոկոս), որոնք շահույթ ստանալու դեպքում պետք է գուտ շահույթից շահաբաժին վճարեին: Առաջարկվում է միջոցառումներ մշակել այդ 385 ընկերություններին գործընթացում ընդգրկելու համար, որը հնարավորություն կտա ՀՀ պետական բյուջե լրացուցիչ եկամուտներ մուտքագրել:

### 2010 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 18,785,251.7 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 954,316,528.3 հազ. դրամ, որը կազմում է ճշտված ծրագրի՝ 97.8%-ը:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ծրագրերի (*գործառնական դասակարգմամբ*) կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով ութ ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրերով նախատեսվել է 7,522,191.7 հազ. դրամ, չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել,
2. թվով երեսուն ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը կազմել են 59,985,426.0 հազ. դրամ, ճշտված ծրագրից ավելի ծախս է կատարվել՝ 15,332,146.6 հազ. դրամի չափով,
3. թվով քսաներեք ծախսային ծրագրերով (այդ թվում՝ 17-ը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը): Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 15,980,158.0 հազ. դրամ, մինչդեռ փաստացի կատարողականը կազմել է 4,334,367.1 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 27.1%-ը: Պետք է նշել, որ այդ ծրագրերում փաստացի ցուցանիշի ամենամեծ բացասական շեղումը ճշտված ծրագրի նկատմամբ գումարային արտահայտությամբ արձանագրվել է «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր» և «Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման ծրագիր» վարկային ծրագրերում՝ -5,001,669.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով (04050110 ծրագրով՝ -3,524,933.5 հազ. դրամ և 04030504 ծրագրով՝ -1,476,735.8 հազ. դրամ),
4. 2010 թվականի ընթացքում նախատեսված 635,406.0 հազ. դրամ գումարի չափով յոթ ծախսային ծրագրեր տարեկան ծրագրի ճշտման արդյունքում զրոյացվել են,

5. թվով քսաներկու ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն ճշտված ծրագրով նախատեսվել են 9,239,414.1 հազ. դրամ (առանց արտաբյուջետային միջոցների), իսկ փաստացի կատարվել են 10,585,317.5 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 114.6%-ով: Այդ քսաներկու ծրագրերից ութը դրամաշնորհային ծրագրեր են, որոնց փաստացի ծախսը կազմել է 1,926,634.0 հազ. դրամ և տասը վարկային ծրագրեր են՝ 7,250,515.1 հազ. դրամ փաստացի ծախսով,

6. 2010 թվականի ընթացքում կատարված ծախսերի կառուցվածքը հետևյալն է՝ սոցիալական պաշտպանություն՝ 25.6%, պաշտպանություն՝ 15.5%, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 15.0%, տնտեսական հարաբերություններ՝ 11.8%, կրթություն՝ 10.3%, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 7.1%, առողջապահություն՝ 5.9%, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 4.5%, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 2.3%, հանգիստ, մշակույթ և կրոն՝ 1.7%, շրջակա միջավայրի պահպանություն՝ 0.5%:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասը բաժիններում նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Շրջակա միջավայրի պաշտպանություն» բաժնում՝ 78.4%, իսկ գերակատարվել է միայն Հանգիստ, մշակույթ և կրոն բաժինը՝ 100.1%: Ծրագրերից ամենացածր՝ 1.4% կատարողական է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության ծրագրում, ամենաբարձրը՝ 3,799.4%, Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրում:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (ներառյալ՝ արտաբյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը (*տնտեսագիտական դասակարգմամբ*) հետևյալն է. 80.0%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, 20.0%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն են:

2009 թվականի համեմատ, 2010 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 2.7%-ով: 2010 թվականին ծախսերը Օրենքով նախատեսվել է 935,524,584.0 հազ. դրամ: 2010 թվականին փաստացի ծախսերը կազմել է 954,316,528.3 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 102.0%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 97.8%-ով:

2010 թվականին պետական բյուջեից 17,849,862.3 հազ. դրամը տրամադրվել է սուբսիդիաներին, որից՝ 16,785,545.1 հազ. դրամը, կամ 94.0%-ը պետական կազմակերպու-

թյուններին տրամադրված սուբսիդիաներն են, իսկ 1,064,317.3 հազ. դրամը կամ 6.0%-ը՝ ոչ պետական կազմակերպություններին տրամադրված սուբսիդիաները:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 94,375,285.8 հազ. դրամի դրամաշնորհներ (ընդամենը ծախսերի 9.9%-ը), որից՝ 87,223,956.0 հազ. դրամը պետական հատվածի այլ մակարդակներին հատկացված դրամաշնորհներն են (ընդամենը դրամաշնորհների 92.4%-ը), 5,583,072.9 հազ. դրամը (ընդամենը դրամաշնորհների 5.9%-ը) կապիտալ դրամաշնորհներն են, հատկացված պետական հատվածի այլ մակարդակներին, 1,451,446.2 հազ. դրամը (ընդամենը՝ դրամաշնորհների 1.5%-ը) հատկացվել են միջազգային կազմակերպություններին:

Ընթացիկ դրամաշնորհներից 32,421,789.3 հազ. դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներին, 17,595,994.6 հազ. դրամը՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, իսկ այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել է 26,017,488.4 հազ. դրամ:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերի 25.6%-ը կամ 244,020,961.9 հազ. դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որից 73.3%-ը միայն կենսաթոշակներն են:

«Այլ ծախսեր» հոդվածով հատկացվել է 138,305,321.2 հազ. դրամ, որից 134,508,889.6 հազ. դրամը, կամ՝ 97.3%-ը այլ ծախսերի «այլ ծախսերն» են:

2010 թվականին «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածով ծախսերը Օրենքով նախատեսվել է 164,020,047.0 հազ. դրամ, որը բյուջետային տարվա ընթացքում ավելացվել է 39,560,298.6 հազ. դրամով, կամ 24.1%-ով, ճշտված ծրագրով կազմել է 203,580,345.8 հազ. դրամ և փաստը կազմել է 191,186,412.6 հազ. դրամ: Բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և դրանց օտարումից մուտքերը ավելացվել են համապատասխանաբար՝ 39,572,311.1 հազ. դրամով և 12,012.3 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը համապատասխանաբար կազմել է՝ 203,606,648.1 հազ. դրամ և 26,302.3 հազ. դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի ծախսերը և դրանց օտարումից մուտքերը համապատասխանաբար կազմել են՝ 191,750,886.4 հազ. դրամ և 564,473.8 հազ. դրամ:

ՀՀ 2010 թվականին պետական բյուջեի ծախսերի *(գերատեսչական դասակարգմամբ)* վերլուծությունից պարզվել է, որ ընդամենը փաստացի ծախսերից 56.7%-ը բաժին է ընկնում հինգ գերատեսչություններին: Օրինակ՝

1. ՀՀ 2010 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 20.0%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը Օրենքով

նախատեսվել է հատկացնել 189,865,475.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 190,459,999.5 հազ. դրամ, և փաստացի ծախսը կատարվել է 190,441,336.6 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 100.0%-ը: 2010 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2009 թվականի համեմատ աճել է 1.8%-ով:

2. 2010 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 9.5%-ն է, որը Օրենքով նախատեսվել է 92,845,923.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 93,148,519.1 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության փաստացի ծախսերը կազմում են 92,562,998.5 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի՝ 99.7%-ը, ճշտված ծրագրի՝ 99.4%-ը:

3. 2010 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 5.9%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը: Այդ գերատեսչությանը հատկացված միջոցների օգտագործման համար Օրենքով նախատեսվել է հատկացնել 55,462,854.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 58,223,126.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կատարվել է 56,702,249.2 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 97.4%-ը: 2010 թվականին ՀՀ առողջապահության նախարարության փաստացի ծախսերը 2009 թվականի համեմատ աճել է 1.2%-ով:

4. 2010 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 5.7%-ը բաժին է ընկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը: Օրենքով նախատեսվել է հատկացնել 53,155,579.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 54,283,246.9 հազ. դրամ, փաստացի ծախսը կատարվել է 54,227,575.3 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 99.9%-ը: 2010 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2009 թվականի համեմատ աճել է 4.6%-ով:

2010 թվականին գերատեսչություններից ճշտված ծրագրի նկատմամբ ամենացածր կատարողական է արձանագրվել «ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն» գերատեսչությունում, այսպես՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 144,795.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 521,346.3 հազ. դրամ, և փաստացի ծախսը կատարվել է 396,367.7 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 76.0%-ը: Թերակատարումը հիմնականում պայմանավորված է՝ Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (արտաբյուջետային միջոցների հաշվին)» ծրագրով, որի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 68.4%:



Ըստ Հաշվետվության, 2010 թվականին ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 18,785,251.7 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 77.9%:

2010 թվականին արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ամենամեծ ծախս կատարել են երեք գերատեսչություն՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն՝ ամբողջ արտաբյուջետային միջոցների 59.4%-ը,
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ ամբողջ արտաբյուջետային միջոցների 27.1%-ը,
3. ՀՀ առողջապահության նախարարություն՝ ամբողջ արտաբյուջետային միջոցների 6.9%-ը:

2010 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Օրենքով նախատեսվել է հատկացնել 21,898,748.7 հազ. դրամ: Տարվա ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է 639,298.4 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 22,538,047.1 հազ. դրամ: 2010 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 21,649,375.5 հազ. դրամ: 2010 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից 49.7%-ը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը կազմել են «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով կատարված ծախսերը:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2010 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին կատարված ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծախսերի 53.0%-ը բաժին է ընկնում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ որից 48.6%-ը ուղղվել է «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով կատարված ծախսերին: Այդ հոդվածով 2010 թվականի ընթացքում ՀՀ կառավարության հինգ որոշումներով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը նախատեսվել է հատկացնել 5,522,044.2 հազ. դրամ՝ ՀՀ կառավարության՝ 29.04.10թ. թիվ 476-Ն որոշում՝ 175,000.0 հազ. դրամ, 01.07.10թ. թիվ 858-Ն որոշում՝ 2,940,374.2 հազ. դրամ, 01.07.10թ. թիվ 874-Ն որոշում՝ 1,432,800.0 հազ. դրամ, 29.07.10թ. թիվ 1169-Ն որոշում՝ 47,930.0 հազ. դրամ և 26.08.10թ. թիվ 1204-Ն որոշում՝ 925,940.0 հազ. դրամ: Սակայն փաստացի այդ հոդվածով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 5,222,345.4 հազ. դրամ, կամ 299,698.8 հազ. դրամով պակաս: Պետք է նշել, որ ՀՀ կառավարության 29.07.10թ. թիվ 1169-Ն որոշմամբ նախատեսվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացնել 62,000.0 հազ. դրամ, որից 47,930.0 հազ. դրամը պետք է ուղղվեր «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով կատարվող ծախսերին, 2,070.0 հազ. դրամը՝ «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածով կատարվող ծախսերին,

իսկ 12,000.0 հազ. դրամը՝ «Այլ կապիտալ ծախսեր» հոդվածով կատարվող ծախսերին, սակայն փաստացի կատարվել է միայն «Այլ կապիտալ ծախսեր» հոդվածով կատարվող ծախսը, որն ուղղվել է ավտոմեքենա ձեռք բերելուն, իսկ մնացած 50,000.0 հազ. դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծախսերը չեն կատարվել:

2010 թվականի բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 336,911,193.6 հազ. դրամի գնումներ (առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի գնումների), սակայն փաստացի վճարվել է 330,377,733.6 հազ. դրամ:

Վերահսկիչ պալատի կարծիքով, Հաշվետվությունը պետք է ներառի գնումների գործընթացի վերաբերյալ համապատասխան տվյալներ՝ ըստ գերատեսչությունների գործարքների (ընտրանքային), որը հնարավորություն կտա գնահատել Հայաստանի Հանրապետությունում պետական կարիքների համար իրականացվող գնումների արդյունավետությունը:

### **2010 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ**

2010 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 173,877,101.3 հազ. դրամ: 2009 թվականի համեմատ, 2010 թվականին պակասուրդի մեծությունը նվազել է 27.3 տոկոսային կետով, որը պակասուրդի ֆինանսավորման և արտաքին, և ներքին աղբյուրի նվազման արդյունք է:

2010 թվականին պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 193,386,538.2 հազ. դրամով: Տարվա ընթացքում ՀՀ կառավարությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պակասուրդի ֆինանսավորման մեծությունը ավելացրել է 9,948,770.4 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 203,335,308.6 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 89.9%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 85.5%:

2010 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 99,554,058.8 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել են փոփոխություններ, և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը ավելացվել է 33,873,618.1 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 133,427,676.9 հազ. դրամ: Փաստացի այդ ցուցանիշը կազմել է 107,402,605.1 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ 107.9%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 80.5%:

Ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի «ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը

պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում հաշվեկշռի հրապարակման պահից երեսուն օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, Օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին է տրամադրում անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ: Այդ մուրհակների մարումը կատարվում է Կենտրոնական բանկի պահանջի դեպքում՝ պետական բյուջեի հաշվին»:

2010 թվականի օգոստոսի 12-ի թիվ 989-Ա որոշմամբ 2009 թվականի ֆինանսական գործունեության արդյունքում ՀՀ կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկին տրամադրել է 55,644,010,355.0 դրամի անվանական արժեքով անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակ, այսինքն՝ ձևավորվել է պարտավորություն (երաշխիք)՝ ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ:

Հարկ ենք համարում նշել, որ պետական ընդհանուր ռեսուրսները 2010 թվականին նվազել են 2009 թվականի նկատմամբ 49,926.9 մլն դրամով, այսինքն՝ առկա է պետական ընդհանուր ռեսուրսների նվազման միտում:

Համաձայն Հաշվետվության, 2010 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է 49,879.3 մլն դրամ, այդ թվում՝ (9,642.5) մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն, *որից՝*

(18,742.0) մլն դրամ՝ ԿԳ-ում դեպոզիտի փոփոխություն,

2,391.3 մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

2,850.8 մլն դրամ՝ արտաբյուջեի փոփոխություն,

(32.8) մլն դրամ՝ մոնետիզացման հաշիվների փոփոխություն,

2,817.1 մլն դրամ՝ ԾԻԳ-ի միջոցների փոփոխություն,

1,073.1 մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

(51,000.0) մլն դրամ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում,

(49,926.9) մլն դրամ՝ պետական ընդհանուր ռեսուրսների (ներառյալ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում) փոփոխություն, այդ թվում՝ 435.3 մլն դրամ՝ միջանկյալ հաշվի փոփոխություն,

(153.6) մլն դրամ՝ տարեսկզբի ազատ մնացորդի փոփոխություն,

111.9 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մնացորդի փոփոխություն,

467.5 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն,

57.1 մլն դրամ՝ «Արմենիա-2010» ուսումնավարժության անցկացման նպատակով ԿԳ-ում բացված արտաբյուջետային հաշվին փոխանցված միջոցներ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2011 թվականի տարեսկզբի պետական ընդհանուր ռեսուրսները կազմել են 32,495.5 մլն դրամ:

2010 թվականին Օրենքով նախատեսվել է Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ստանալ 137,548,601.8 հազ. դրամ արտաքին վարկ, սակայն տարվա ընթացքում այդ ցուցանիշը փոփոխվել է, և տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 113,390,250.7 հազ. դրամ: 2010 թվականին արտաքին վարկերի և փոխառությունների ստացումը փաստացի կազմել է 107,741,042.2 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 95.0%-ը:

2010 թվականին Օրենքով նախատեսվել է մարել 9,810,563.5 հազ. դրամ, փաստացի մարվել է 9,681,583.2 հազ. դրամ: Կատարողականը ծրագրի և ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 98.7%:

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՌԳ-ի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին բյուջետային վարկերի տրամադրումը տնտեսավարող սուբյեկտներին կազմել է 103,434,340.5 հազ. դրամ, որից՝ 5,831,241.5 հազ. դրամը՝ 2010 թվականի ընթացքում իրականացված վարկավորումն է: 2009-2010 թվականների ընթացքում ՌԳ-ի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձը կազմել է 21,053,577.0 հազ. դրամ, որից՝ 16,397,596.0 հազ. դրամը՝ 2010 թվականի ընթացքում:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՀՀ կառավարության կողմից «Հայռուսգազարդ» ընկերությանը՝ վեց ամիս մարման ժամկետով բյուջետային վարկ տրամադրելու մասին որոշումը կայացվել է 2009 թվականի հոկտեմբերի 1-ի (թիվ 1127-Ն), և ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեն կազմելիս չի նախատեսել գումարներ՝ դեֆիցիտի Ներքին աղբյուրների տարրերում՝ 1. «Տրամադրված վարկեր և փոխառություններ վերադարձից մուտքեր»-ի 2.5 կետում «Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական վարկի միջոցների հաշվին տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված վարկերի վերադարձ», 2. «Այլ»-ում 2.6 կետում «Կայունացման դեպոզիտային հաշվի համալրում»-ում՝ Տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված:

Հաշվետվությունում արտաքին վարկերի օգտագործումն ու ստացումը հաշվարկվել է արտաքին վարկերի օգտագործման ու ստացման օրվա՝ տվյալ արտաքին վարկերի համապատասխան արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքով, իսկ սպասարկումը և մարումը հիմնականում իրականացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի միջև կնքված 05.01.2007թ. «Հաշվի սպասարկման մասին» թիվ 11/301261 պայմանագիրը, և ի լրումն այդ պայմանագրի՝ 2009թ. սեպտեմբերի 1-ի թիվ 6 համաձայնագիրը, ըստ որի՝ ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և մարումը պետք է հաշվարկվի «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի

նախագծում ամրագրված՝ ֆիքսված փոխարժեքով (2010թ.-ի համար՝ 1 ԱՄՆ դոլար = 386.4 ՀՀ դրամ), բացառությամբ Ռուսաստանի Դաշնության և Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի սպասարկման (տոկոսավճար, մարում) գծով վճարումների, որոնք կարգավորվում են ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի միջև 05.01.2007թ. կնքված «Հաշվի սպասարկման մասին» թիվ 11/301261 պայմանագրի համապատասխան լրացումներով, ինչպես նաև Ասիական Չարգացման Բանկի իրականացման փուլում գտնվող վարկային ծրագրերի գծով տոկոսավճարների, Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկի ու Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկի վարկերի գծով միանվագ կոմիսիոն վճարների, որոնց վճարումն իրականացվում է վարկային համաձայնագրերի դրույթներին համապատասխան և փախարկվում է վճարման օրվա դրությամբ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներով:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ իննսունուր վարկային ծրագրերից ութսունուրի սպասարկումը, որը կազմում է սպասարկման ընդհանուր գումարի 42.0%-ը, ամբողջությամբ իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի միջև կնքված 05.01.2007թ.՝ «Հաշվի սպասարկման մասին» թիվ 11/301261 պայմանագրին, և ի լրումն այդ պայմանագրի 01.09.2009թ. թիվ 6 համաձայնագրին համապատասխան՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ամրագրված ֆիքսված փոխարժեքով (2010թ.-ի համար՝ 1 ԱՄՆ դոլար = 386.4 ՀՀ դրամ): Նույն ֆիքսված փոխարժեքով է իրականացվել նաև Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի սպասարկման գերակշիռ մասը (շուրջ 2/3-ը), որը ՀՀ կառավարության արտաքին պետական պարտքի սպասարկման 31.4%-ն է, իսկ Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի սպասարկման մնացած մասը իրականացվել է 1 ԱՄՆ դոլարը = 370.17 դրամ փոխարժեքով, որը ՀՀ կառավարության արտաքին պետական պարտքի սպասարկման 16.4%-ն է: Վճարման օրվա դրությամբ ձևավորված փոխարժեքով է իրականացվել ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման 10.1%-ը:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվել է, որ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չէր կատարվում, և ՀՀ կառավարությունը 2010 թվականի մարտի 25-ին ընդունել է թիվ 324՝ «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառման կարգը հաստատելու մասին» որոշումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառումը պետք է կատարվի

գանձապետական միասնական հաշվով: 2010 թվականի ընթացքում գանձապետական միասնական հաշիվ է տեղափոխվել Համաշխարհային բանկի տասնմեկ ԾԻԳ-երի հաշիվները, այսինքն՝ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի որոշումը կատարվել է մասնակիորեն:

Մեր կարծիքով, ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով անհրաժեշտ է, որ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2 կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև ««Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով:

### **2010 թվականի ՀՀ պետական պարտքը**

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,795.0 մլն ԱՄՆ դոլար (1,379.3 մլրդ դրամ), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,299.0 մլն ԱՄՆ դոլար (1,199.0 մլրդ դրամ), իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 496.0 մլն ԱՄՆ դոլար (180.3 մլրդ դրամ): 2010 թվականին ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 86.9%, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 13.1%, այսինքն՝ 2009 թվականի համեմատ, 2010 թվականին ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ՀՀ արտաքին պետական պարտքը նվազել է 1.3 տոկոսային կետով:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) 60.0%-ը»: 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2009 թվականի ՀՆԱ-ի 44.5%, մինչդեռ 2009 թվականին այդ ցուցանիշը կազմել է 35.6%: Երկու դեպքում էլ պահպանվել է օրենքի այդ կետի պահանջը:

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,299.0 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 2,736.4 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կառավարության պարտավորությունն է, իսկ 562.6 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) պարտավորությունը: 2010 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքը, 2009 թվականի համեմատ, աճել է մոտ 1.1 անգամ: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսման (նոր արտաքին վարկեր չներգրավելու դեպքում) ՀՀ արտաքին պետական պարտքը «պիկին» կհասնի 2012 թվականին՝ 3,821.2 մլն ԱՄՆ դոլար, որից հետո կնվազի:

2010 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 34.6% է, այսինքն՝ այդ ցուցանիշով չի գերազանցել 50.0%-ի սահմանը, երեք ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր, մեկ ցուցանիշով՝ միջին պարտքի բեռ ունեցող և մեկ ցուցանիշի արդյունքով դասակարգվել է ծանր պարտքի բեռ ունեցող երկրների խմբում (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**

**Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները**

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ			
		2007	2008	2009	2010
<b>ԶՆԱ/ՀՆԱ</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 80% և ավելի				
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%				
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 48%	9.0%	8.5%	26.5%	28%
<b>ԶՆԱ/ Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 220% և ավելի				
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%			168.8%	139.4%
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 132%	46.9%	56.6%		
<b>Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 25.9%				
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 23.45%				
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 7.8%	2.9%	3.1%	5.4%	4.9%
<b>Տոկոսավճար /Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 11.65%				
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 9.85%				
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 3.6%	0.6%	0.7%	2%	2.4%
<b>Արտաքին պետական պարտք/Արտահանում</b>	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 387.95%			221.7%	
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 209.00%	81.6%	89.8%		177.1%
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 64.00%				
<b>Արտաքին պարտք/ՀՆԱ</b>	Սահման 50.00%	14%	13.6%	36.1%	34.6%
<b>ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետբյուջեի եկամուտներ</b>		2.6%	2.1%	3.8%	4.4%

Համաձայն 2009 թվականի նկատմամբ 2010 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի փոփոխության գործոնային վերլուծության արդյունքների, հաշվետու տարում տրամադրված արտաքին վարկերի արտարժույթի և ԱՄՆ դոլարի փոփոխության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է բացասական նշանով 11.6 մլն ԱՄՆ դոլար կամ -3.5%, իսկ տրամադրված արտաքին վարկի ստացման և մարման գումարների տարբերության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է 344.0 մլն ԱՄՆ դոլար կամ 103.5%:

2010 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները (մասհանումներ) կազմել է 380.4 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ՀՀ կառավարությունը ստացել է 287.0 մլն ԱՄՆ դոլար (107,741.0 մլն դրամ), իսկ ԿԲ-ն՝ 93.5 մլն ԱՄՆ դոլար: 2010 թվականին ստացված արտաքին վարկերի 65.7%-ը կամ 250.1 մլն ԱՄՆ դոլարը ոչ արտոնյալ վարկերն են:

2010 թվականին արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը ՀՀ արտաքին պետական պարտքում կազմել է 60.8%: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2009 և 2010 թվականների ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքում առկա է արտոնյալ վարկերի տեսակարար կշռի նվազում: 2008 թվականի համեմատ 2009 թվականին արտոնյալ վարկերը նվազել են 34.4 տոկոսային կետով, իսկ 2010 թվականին 2008 թվականի համեմատ՝ 38.2 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության ստացած 287.0 մլն ԱՄՆ դոլար (107,741.0 մլն ՀՀ դրամ) արտաքին վարկերի՝

- 94.5 մլն ԱՄՆ դոլարը (35,660.7 մլն ՀՀ դրամ) կամ 33.0%-ը երկու միջազգային կազմակերպությունների (IMF, IDA) կողմից դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող երեք ծրագրերի հանրագումարն է:
- 192.5 մլն ԱՄՆ դոլարը (72,080.4 մլն ՀՀ դրամ) կամ 67.0%-ը ստացվել է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպություններից ու օտարերկրյա պետություններից, տնտեսության առաջնային ոլորտների զարգացման ներդրումային ծրագրերի ֆինանսավորման նպատակով, ըստ ծրագրերի և վարկատուների:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի մարման և սպասարկման ծախսը կազմել է 91.0 մլն ԱՄՆ դոլար (44.2 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ և 46.7 մլն ԱՄՆ դոլար մարում), որից՝ ՀՀ կառավարության ներգրավված արտաքին վարկերի մարման և սպասարկման ծախսը կազմել է 63.3 մլն ԱՄՆ դոլար ((24,285.3 մլն ՀՀ դրամ), 38.2 մլն ԱՄՆ դոլարը (14,603.8 մլն ՀՀ դրամ) տոկոսավճարներ և 25.1 մլն ԱՄՆ դոլարը (9,681.6 մլն ՀՀ դրամ՝ մարում), իսկ ԿԲ-ինը՝ 27.7 մլն ԱՄՆ դոլար (6.0 մլն ԱՄՆ դոլարը՝ տոկոսավճարներ և 21.7 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում):

2010 թվականին վճարված 38.2 մլն ԱՄՆ դոլար (14,603.8 մլն ՀՀ դրամ) ՀՀ կառավարության ներգրավված արտաքին վարկերի տոկոսավճարներից 18.3 մլն ԱՄՆ դոլարը (6,957.3 մլն ՀՀ դրամ), կամ 47.8%-ը ՌԴ-ի կողմից տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) վարկի համար տրված տոկոսավճարներն են:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ՝

1. Արտաքին վարկերի մարման և սպասարկման ծախսը երեք տարվա ընթացքում մեծանում է մի քանի անգամ: Այսպես, 2013 թվականին ՀՀ արտաքին վարկերը մարելու և տոկոսավճարներն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի 433.6 մլն ԱՄՆ դոլար, կամ 4.8



անգամ ավելի, քան 2010 թվականին, որից՝ ՀՀ կառավարությանը արտաքին վարկերը մարելու և տոկոսավճարներն իրականացնելու համար 2013 թվականին անհրաժեշտ կլինի 226.4 մլն ԱՄՆ դոլար, կամ 3.6 անգամ ավելի, քան 2010 թվականին:

2. Արտաքին վարկի մարման և սպասարկման ծախսի աճը հիմնականում պայմանավորված է՝ նախ՝ Արժույթի Միջազգային Հիմնադրամի և ՌԴ-ի կողմից տրամադրված վարկերի ներգրավմամբ, և այդ վարկերի նկատմամբ պարտավորությունը կազմել է 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի 37.6%-ը, իսկ դրանց մարումն ու սպասարկումը՝ ՀՀ արտաքին պետական պարտքի մարման և սպասարկման գումարի 53.4%-ը: Պատկերը փոխվում է 2012 թվականից, երբ պետք է սկսվի վարկերի մարման գործընթացը: Այսպես՝ 2012 թվականին Արժույթի Միջազգային Հիմնադրամի և ՌԴ-ի կողմից տրամադրված վարկերի պարտքը ՀՀ արտաքին պետական պարտքում կկազմի 34.0%, դրանց մարումն ու սպասարկումը ՀՀ արտաքին պետական պարտքի մարման և սպասարկման գումարի՝ 77.4%-ը, 2013 թվականին՝ ՀՀ արտաքին պետական պարտքի 29.2%-ը, իսկ դրա մարումն ու սպասարկումը՝ ՀՀ արտաքին պետական պարտքի մարման ու սպասարկման գումարի՝ 83.7%-ը:

Վերահսկիչ պալատի տեսանկյունից, եթե տնտեսական աճը և հարկային եկամուտների հավաքման ծավալները մնան 2010 թվականի մակարդակին, ապա վտանգ կա, որ Հայաստանի Հանրապետությունը կարող է լուրջ խնդիրներ ունենալ նախկինում վերցրած պարտավորությունների մարման և դրանց սպասարկման (տոկոսավճարներ) իրականացման գործում, այսինքն՝ կառաջանա պարտքային ճգնաժամ: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ: Դրանք են՝

1. ՀՀ պետական պարտքի ծավալների, ինչպես նաև դրանց սպասարկմանն ուղղվող ռեսուրսների գումարների աճով պայմանավորված՝ ներկայումս պետք է ՀՀ պետական պարտքում ներքին պարտքի տեսակարար կշիռը մեծացվի, քանի որ վերջինիս ռիսկայնությունը ցածր է, այսինքն՝ բացակայում է արտարժույթի գործոնը:

2. Տնտեսական աճի հետագա հնարավորություն ստեղծելու նպատակով, ոչ արտոնյալ վարկերի մարման ժամկետը երկարաձգել, որով հնարավոր կլինի լուծել պարտավորության կատարման խնդիրը:

3. Տվյալ բյուջետային տարում առաջացած լրացուցիչ եկամուտների և տնտեսման հաշվին մինչև մարման ժամկետը մարել ոչ արտոնյալ վարկերը, մասնավորապես՝ ՌԴ-ի կողմից տրամադրված վարկը:

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան

հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: